Հ. Ս. Խ. Հ. ՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

628
G-93

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԽՍՀՄ ԽՈՐՀՏՆՏԺՈՂԿՈՄԱՏԻ ՍԻՍՏԵՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՅԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ՀՐՇԵՋ ԳՈՒԳԱՋՆԵՐԻ (ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ) ՀԱՄԱՐ

628
G-93

ՅԵՐԵՎԱՆ 1934

12 JUL 2013

Պետհրատի տպարան Սրբագրիչ՝ Հ. Մայիլյան

Գլավլիտ № 9064 (բ), Պատվեր № 11, Տիրաժ 500,

Ca 34-Л / ա 779

04 AUG 2010

№ 13

Հաստատված է Կոմ. Տնտ.
Համ՝ Խոր. 26-110-1933 թ.
Նախագահ՝ ԿՈՒԻԲՅԱԿ

Համաձայնեցված է
Խ ընտանժողկոմատի անդամ
(ԿԱՇԻՐԻՆ)
1933 թ. Հոկտեմբերի 15.

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

# ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ ԽՈՐՀՏՆՏԺՈՂԿՈՄԱՏԻ ՍԻՍՏԵՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՑԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ՀՐՇԵՋ ԳՈՒԳԱԶՆԵՐԻ (ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ) ՀԱՄԱՐ

## 1. ԳՈՒԳԱԶԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՑԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

1. ա) Խորհտնտեսության կամավոր հրշեջ գուգազի նպատակն է՝ պայքարել հրդեհների դեմ (խորհտնտբաժնի, ֆերմայի անունը) տերրիտորիայի վրա.

բ) կիրառել հրդեհների դեմ նախազգուշական միջոցներ և հսկել, վորպեսզի դրանք կանոնավոր և ճիշտ կատարվեն վերոհիշյալ (կետ «ա») տերրիտորիայի սահմաններում.

գ) ոգնություն ցույց տալ նույն տերրիտորիայի վրա կամ նրա մոտ տարերային աղետներ՝ հեղեղումներ, փլուզումներ, փոթորիկներ, և այլն տեղի ունենալու բոլոր դեպքերում.

2. Նշված նպատակները լավագույն կերպով իրագործելու համար, հրշեջ գուգազը, կապակցելով իր աշխատանքը սոցիալիստական շինարարության հերթական խնդիրների հետ և կիրառելով սոցմրցման և հարվածայնության մեթոդները, պարտավոր է՝

ա) գործնականորեն տեսականորեն զբաղվել հակահրդեհային գործով.

բ) իմանալ թե վորքան է տվյալ շրջանը վտանգված հրդեհային տեսակետից.

գ) աջակցություն ցույց տալ հրդեհային պահպանության պաշտոնատար անձանց, խորհտնտեսությունների, դուգաջից դուրս մնացած բանվորներին և ծառայողներին ծանոթացնելու, թե վորոնք են հրդեհային պահպանության պահանջները, ինչպես պետք է հրդեհների ժամանակ խուճապի առաջն առնել, այլ և բացատրելու իրագործվող հակահրդեհային միջոցների կարևորությունն ու նպատակահարմարությունը.

դ) հսկողություն ունենալ հրդեհային սարքավորման պահպանության և կանոնավոր լինելու, ինչպես և հակահրդեհային այլ ձեռնարկումների պատշաճ վիճակի վրա տվյալ տերրիտորիայում:

3. Դուգաջին իրավունք է վերապահվում ունենալ կամավոր հրշեջ դուգաջների համար սահմանված ձևի դրոշակ և բլանկային կնիք, դուգաջի անդամներն իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ կարող են օգտագործել Կ.Տ.Հ.Խ. կողմից միության բոլոր կամավոր հրշեջ կազմակերպությունների համար սահմանված միասնական ձևի զգեստ:

## 2. ԴՈՒԳԱՋԻ ԿԱԶՄԸ.

4. Խորհտնտեսության կամավոր հրշեջ դուգաջի անդամներ կարող են լինել 18 տարեկանից վոչ պակաս հասակ ունեցող անձինք, վորոնք աշխատում են տվյալ խորհտնտեսության մեջ, բաժնում և ֆերմայում և չունեն հակահրդեհային գործով զբաղվելուն խոչնդոտ հանդիսացող ֆիզիկական պակասություններ:

## 3. ԴՈՒԳԱՋԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՅԵՎ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԴՈՒԳԱՋԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ՅԵՐԿԱՐԱՏԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

5. Դուգաջի մեջ մտնելու համար պետք է համապատասխան դիմում տալ նրանց պետին, վորը կարգադրում է ընդունման առթիվ խորհտնտեսության մեջ, բաժնում և ֆերմայում:

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
им. А. Мясникяна
60142 - 67

6. Հրշեջ դուգաջի կազմից նրա անդամները դուրս են գալիս՝

ա) խորհտնտեսության դիրեկտորի կամ բաժնի կառավարչի կարգադրության համաձայն՝ հրշեջ դուգաջի պետի առաջադրությամբ.

բ) իրենց ցանկությամբ, ընդվորում այդ առթիվ դիմումները պետք է դուգաջի պետին տրվեն վոչ ուշ քան հեռանալու որվանից մեկ շաբաթ առաջ:

7. Դուգաջի անդամներին՝ իրենց պարտականությունների կատարման ժամանակ ցույց տված քաջագործությունների, յերկարատև հրդեհային ծառայության, հրդեհային պահպանության ամրացման և զարգացման գործում ունեցած հատուկ արժանիքների համար, հրշեջ դուգաջի անդամները կարող են պարգևատրվել՝

ա) գովասանագրով, բ) ժետոններով կամ հրդեհային հանդերձանքի առարկաներով, գ) դրամով կամ այլ արժեքավոր վճարումներով, դ) Կ.Տ.Հ.Խ. կողմից հրշեջների համար սահմանված պարգևներով.

ե) համապատասխան պարգևներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Յուրաքանչյուր պարգևատրման մասին պետք է հրաման արձակվի խորհտնտեսության մեջ, բաժնում և ֆերմայում:

2. «գ» և «ե» կետերում նշված պարգևներ տալու մասին պետք է միջնորդել ԽՍՀՄ խորհտնտժողկոմատի հրդեհային պահպանության սեկտորի միջոցով:

8. Դուգաջի բոլոր անդամները ցուցակագրվում են:

9. Դուգաջի ղեկավարությունը դրվում է նրա պետի վրա, վորն իր հայեցողությամբ նշանակում է ջոկատների պետեր:

10. Դուգաջի անդամները հրդեհային ծառայության ժամանակ իրենց պետերի կարգադրությունները չկատարելու համար կարող են յենթարկվել հետևյալ տույժի՝ նախազգուշացման, նկատողության և դուգաջի կազմից հեռացնելուն, համաձայն խորհտնտեսության դիրեկտորի կողմից հաստատված և պրոֆեսիոնալ միու-

թյան տեղական մարմնի հետ համաձայնեցված տույժա-ցուցակի:

11. Գուգաձում ընդհանուր կարգադրությունները պետն անում ե հրամաններ տալու միջոցով, վորոնք հաստատվում են այն խորհտնտեսության կամ բաժնի, ֆերմայի կառավարչի կողմից, վորին կից ե կազմակերպված գուգաձը:

12. Գուգաձի պետին նշանակում կամ արձակում ե խորհտնտեսության դիրեկտորը կամ բաժնի, ֆերմայի կառավարիչը, տրեստի հրդեհային պահպանության տեսչի և քաղբաժնի պետի համաձայնությամբ:

## 4. ՀԱՇՎԵՏՈՒՎՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

13. Գուգաձի հաշվետվությունն ու գործավարությունը գուգաձի պետը տանում ե սահմանված ձևերով: Գուգաձի գումարները պահվում և ծախսվում են տվյալ խորհտնտեսության մեջ, բաժնում, ֆերմայում, սահմանված ընդհանուր կարգով:

14. Հրշեջ գուգաձի ամբողջ գրասենյակային աշխատանքը կատարվում ե խորհտնտեսության կամ բաժնի և ֆերմայի ապարատի միջոցով:

## 5. ԳՈՒԳԱՁԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

15. Գուգաձի բոլոր անդամները պարտավոր են՝

ա) տագնապի ազդանշան տալուն պես դուրս գալ հավաքի կամ հրդեհի վայրը կրակը հանգցնելու գործին ակտիվ մասնակցություն ցույց տալու համար:

բ) անպայմանորեն և վերապահորեն յենթարկվել իրենց անմիջական պետերի և գուգաձի պետի կամ նրանց փոխարինողների բոլոր, ծառայությանը վերաբերող կարգադրություններին.

գ) հսկել, վորպեսզի տվյալ տերրիտորիայի վրա բոլոր հրամարիչ պարագաները սարք ու կարգին լինեն և նկատված թերությունների մասին իսկույն և յեթ հայտնեն իրենց անմիջական պետերին կամ գուգաձի պետին:



## 6. ԳՈՒԳԱՁԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

16. Գուգաձի պահպանման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են այն խորհտնտեսության, բաժնի և ֆերմայի հաշվին, վորոնց կից ե կազմակերպված գուգաձը:

17. Գուգաձին պետք ե տրվի՝

ա) առանձին բնակարան ջեռուցմամբ և լուսավորությամբ հերթապահությունների, զբաղմունքների զգեստավորումը պահելու և գրասենյակի համար.

բ) հրդեհային ինվենտար և գուգաձի կարիքների համար անհրաժեշտ քանակությամբ զանազան տեսակի նյութեր և պարագաներ

գ) մարտական հանդերձանք, սաղավարտներ, բրեզենտի հագուստեղեն, մինկլերյան ցանցեր (ըստ բնապանների և յենթաբնապանների թվի, բայց վոչ պակաս քան 4 հատ յուրաքանչյուր գուգաձին), ծածրակալներ, բասպիրատորներ (գուգաձի կազմի կեսի համար), փրկության պարան (վոչ պակաս քան յուրաքանչյուր գուգաձին 2 հատ այնտեղ, վորտեղ յերկուսից ավելի հարկ ունեցող շենքեր կան), ճտկավոր կոշիկներ, բրեզենտի և մահուդի թաթմաններ, տաք կորդակներ, տաք կուրտկաներ և շալվարներ. Մարտական հանդերձանք տրվում ե կացնավորների և փողավորների ջոկատներին. գուգաձի պետին բացի մարտական հանդերձանքից, տրվում ե նաև ծառայության զգեստ:

18. Գուգաձի պետին և նրա օգնականներին խորհտնտեսության, բաժնի և ֆերմայի կողմից տվյալ շրջանի սահմաններում բնակարաններ տրվում են առաջին հերթին: Գուգաձի մնացած անդամները բնակարաններ ստանում են խորհտնտեսության մյուս աշխատողների հետ ընդհանուր հիմունքներով, սակայն նրանք նախապատվության իրավունք ունեն բնակարաններ ստանալու առաջին հերթին:

19. Ուսումնական տագնապներում, հերթապահություններում, փորձնական և այլ աշխատանքներում անցկացրած ժամանակի համար խորհտնտեսությունը գուգաձորդներին վարձատրություն ե տալիս այդ առթիվ սահմանված նորմաներով:

## 7 ԳՈՒԳԱԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ·

20· Գուգազի լուծարքը կարող է տեղի ունենալ գործող օրենքների հիման վրա այն խորհտնտեսության դիրեկտորի կամ բաժնի և ֆերմայի կառավարչի կարգադրությամբ, որին կից է կազմակերպված գուգազը, քաղբաժնի և տրեստի հրդեհային պահպանության տեսչի համաձայնությամբ:

21· Գուգազի ամբողջ գույքը պատկանում է խորհտնտեսությանը կամ բաժնին և ֆերմային ու գուգազը լուծարքի ենթարկվելուց հետո մնում է վերջինների տրամադրության տակ:

## 8· ԳՈՒԳԱԶԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒՄԸ

22· Այս կանոնադրության մեջ ըստ տեղական պայմանների փոփոխություններ կամ լրացումներ կարելի յե մտցնել միմիայն ԽՍՀՄ Խորհտնտժողկոմատի հրդեհային պահպանության սեկտորի և ԿՏՀԽ թույլտվությամբ:

## ՀՐԱՀԱՆԳ

Հացահատիկային և կենդանաբուծական խորհտնտեսությունների, բաժինների և ֆերմաների կամավոր հրշեջ գուգազների նորմալ կանոնադրության կիրառման կարգի մասին:

1· ԽՍՀՄ տերիտորիայի վրա գտնվող խորհտնտեսություններում, բաժիններում, ֆերմաներում առաջ յեկած հրդեհների և այլ տարերային աղետների դեմ պայքարելու միջոցներ իրագործելու նպատակով, թույլատրվում է կազմակերպել հրշեջ գուգազներ, նրանց վերաբերյալ գոյություն ունեցող նորմալ կանոնադրության և այս հրահանգի հիման վրա:

2· Նորմալ կանոնադրությունը տարածվում է ԽՍՀՄ տերիտորիայի վրա գտնվող խորհտնտեսությունների, բաժինների և ֆերմաների բոլոր հրշեջ կազմակերպությունների վրա, որոնք պարտավոր են 20-օրյա ընթացքում տոմարագրվել այս հրահանգի 10-րդ հոդ. կարգով:



3· Գուգազի քանակական կազմը խորհտնտեսության դիրեկտորը, բաժնի և ֆերմայի կառավարիչը քաղբաժնի և հրդեհային պահպանության տեսչի հետ միասին, որոշում են տնտեսության չափի և հրդեհային տեսակետից վտանգված լինելու համեմատ:

4· Գուգազը ենթարկվում է խորհտնտեսության դիրեկտորին և գտնվում է տրեստի հրդեհային պահպանության տեսչի ու հրդեհային հսկողության տեղական մարմինների տեխնիկական կոնտրոլի տակ:

5· Հրշեջ գուգազներ կազմակերպվում են խորհտնտեսության դիրեկտորի, բաժնի և ֆերմայի կառավարչի կարգադրությամբ, համաձայնեցնելով քաղբաժնի և տրեստի հրդեհային պահպանության տեսչի հետ:

6· Հրշեջ գուգազներ կազմակերպելիս պետք է հայտարարել խորհտնտեսություններում, բաժիններում և ֆերմաներում այն մասին, որ նորմալ կանոնադրության հիման վրա գուգազի մեջ մտնել ցանկացողները կարող են ցուցակագրվել, ընդորում նշված կանոնադրությունը պետք է հայտարարել ցուցակագրության մասին հայտարարելու հետ միասին: Ցանկացողների ցուցակ կազմելուց հետո, խորհտնտեսության դիրեկտորի, բաժնի և ֆերմայի կառավարչի կողմից նշանակվում է գուգազի պետ, համաձայն նորմալ կանոնադրության 12-րդ հոդ.:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Յեթե խորհտնտեսության մեջ: բաժնում և ֆերմայում հրդեհային պահպանության խմբի պետ կամ հրդեհային պահպանության պահակության ավագ գոյություն ունի, ապա գուգազի կազմակերպումն ու ղեկավարությունը նրանց է հանձնվում:

7· Գուգազի մեջ մտնողները պետք է բժշկական քննության ենթարկվեն և վկայական ունենան այն մասին, որ նրանք չունեն այնպիսի ֆիզիկական պակասություններ, որոնք արգելք են հանդիսանում հրդեհային աշխատանքներին:

8· Գուգազի մեջ մտնելու համար պետք է դիմում տալ գուգազի պետին, որն իր յեզրակացությամբ

հանձնում է այդպիսին խորհտնտեսության դիրեկտորի կամ բաժնի կառավարչի հաստատությանը:

9. Հրշեջ գուգազների և նրանց տեխնիկական սարքավորման ու հանդերձանքի օգտագործման, ինչպես և գուգազներին այս հրահանգի 1-ին հոդվածում նշված նպատակներին հասնող աշխատանքներ հանձնարարելու համար զանցառուները յենթարկվում են օրինական պատասխանատվության (Աշխ. Պաշտ. Խորհրդի 1921 թ. 9/5 վորոշումը, ԽՍՀՄ. Օր. Հավ. 1921 թ. № 39 հոդ. 208):

10. Այն խորհտնտեսությունների դիրեկտորները, բաժինների և ֆերմաների կառավարիչները, վորոնց կից նորմալ կանոնադրության հիման վրա հրշեջ գուգազներ են կազմակերպված, պարտավոր են 20 օրվա ընթացքում հայտնել այդ մասին պետական հրդեհային հսկողության տեղական մարմիններին, գյուղական կամ շրջանային խորհուրդներին, վորոնք համապատասխան վկայականներ են տալիս վերջիններին գուգազի ամրագրման և միաժամանակ տեղեկացնում են այդ մասին պետական հրդեհային հսկողության տեղական մարմիններին:

11. Այս հրահանգը հրշեջ գուգազներ ունեցող բոլոր խորհտնտեսությունները, բաժինները և ֆերմաները պետք է ընդունեն ի անշեղ կատարումն և ի ղեկավարություն:

12. Այս հրահանգի ճշտիվ և անշեղ կատարման և հրշեջ գուգազների գործունեության հսկողությունը դրվում է հրդեհային պահպանության տեղական մարմինների և տրեստի հրդեհային պահպանության տեսչի վրա:

13. Հրշեջ գուգազների նորմալ կանոնադրությունը, ինչպես և վերջինի կիրառման կարգի մասին հրահանգը պետք է տեղերում հրապարակել:



## ՀՐԱՀԱՆԳ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ՀՐՇԵՋ ԳՈՒԳԱԶՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ.

1. Գուգազը հետևյալ ջոկերի յե բաժանվում՝

ա) կացնավորների ջոկատ կամ 1-ին ջոկատ.

բ) փողավորների ջոկատ կամ 2-րդ ջոկատ.

գ) ջրամատակարարների ջոկատ կամ 3-րդ ջոկատ (կարիք լինելու դեպքում):

2. Կացնավորների ջոկատն իր տրամադրության տակ ունի՝ լինգ և փրկության գործիք, ինչպես և սանդուխքներ և լուսավորության պարագաներ: Հրդեհների և ուսումնական զբաղմունքների ժամանակ նրանք քանդում են գլխավորապես— շենքեր, կտուրներ, հատակներ, առաստաղներ, փրկում գույքը և տագնապի դեպքում մասնակցում են այլ ջոկերի աշխատանքին:

3. Փողավորների ջոկատն ունի իր տրամադրության տակ՝ ձեռքի հրշեջ պոմպեր, հիդրոպոմպեր, հրամարիչներ, կաշեփողներ, յեռակիներ, ատինդերներ և այլ, ջրամատակարարման վերաբերող, առաջարկներ, բացառությամբ հատուկ մեքենաների և պարագաների, վորոնք առանձնապես են սպասարկում (մոտոպոմպ, ավտոմատ և այլն): Հրդեհների և ուսումնական զբաղմունքների ժամանակ փողավորներն աշխատում են ըներով, անց են կացնում և հավաքում կաշեփողների գծեր և հետևում դրանց, կարիք լինելու դեպքում վերանորոգում են կաշեփողները և փոխադրում գծերը, պահվում են ռանդիրների, յեռակիների և հրդեհային ծորակների մոտ:

4. Ջրամատակարարների ջոկատն ունի իր տրամադրության տակ՝ տակառներ և դույլեր, շլարբաներ, ամաններ և այլն: Հրդեհների և ուսումնական զբաղմունքների ժամանակ նրանք ջուր են տալիս պոմպերին, ինչպես և գործ են ածում ձեռքի հրշեջ պոմպեր:

5. Գուգազի կազմակերպումից հետո, առաջին յերեք ամսվա ընթացքում, գուգազորդներն ուսումնական զբաղմունքներ են ունենում վոչ ուշ քան դեկադը մեկ

անգամ, իսկ հետագայում՝ ոչ ուշ քան ամիսը յերկու անգամ:

6. Հերթապահություն, պահակություն, պոստերի կարգը որոշում է հրշեջ գուգազի ներքին կարգ ու կանոնի վերաբերյալ հատուկ հրահանգով, որը մշակվում է հրշեջ գուգազի պետի կողմից ներքին ծառայության կանոնադրության հիման վրա և հաստատվում խորհտնտեսության դիրեկտորի կամ բաժնի կառավարչի կողմից, համաձայնեցնելով տրեստի հրդեհային պահպանության տեսչի և հրդեհային հսկողության տեղական մարմնի հետ:

## ԳՈՒԳԱԶԻ ՊԵՏԸ

7. Գուգազի պետը նրա գլխավոր և միակ տեխնիկական ղեկավարն է հանդիսանում, որը պատասխանատու յե գուգազի ամբողջ աշխատանքների համար:

8. Գուգազի պետը պետք է հոգա, որպեսզի գուգազորդները գործնականորեն նախապատրաստված լինեն ինչպես հրդեհներ կանխելու, նույնպես և հրդեհներ հանգցնելու բնագավառում:

9. Նա հսկում է, որպեսզի գուգազորդները կատարեն իրենց պարտականությունները և տույժի յենթարկում նրանց, սահմանված տույժացուցակի համաձայն:

10. Պետը պետք է մանրամասնորեն իմանա և կարողանա բացատրել թե ինչու համար և ինչպես են գործում գուգազի տրամադրության տակ յեղած բոլոր հրամարիչները:

11. Հրդեհների և ուսումնական վարժությունների ժամանակ գուգազի պետը միանձնաբար ղեկավարում է նրա բոլոր աշխատանքները և ոչ ոք իրավունք չունի խառնվելու նրա գործին: Իր դիրքով ավելի բարձր կանգնած ավագ պետը գործողության վայրը ժամանելուց հետո, գուգազի պետը հանձնում է նրան իր ավագությունը, թողնելով իրեն միմիայն գուգազի ղեկավարությունը, հրդեհային առանձին մասի պետի իրավունքներով:



12. Գուգազի պետը վարում է և սորագրում ամբողջ գրագրությունը, պահում է իր մոտ բոլոր գրքերը, ֆորմուլյարներն ու այլ փաստաթղթերը:

13. Մեկնելու, հիվանդության և այլ պատճառներով գուգազը ղեկավարելու հնարավորություն չունենալու դեպքում, գուգազի պետը հրամանով իր իրավունքներն և պարտականությունները հանձնում է իր օգնականին՝ կայինավորների ջոկատի պետին:

## ԳՈՒԳԱԶԻ ՊԵՏԻ ՈԳՆԱԿԱՆԸ, ՆԱՅԵՎ ԿԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՋՈԿԱՏԻ ՊԵՏԸ.

14 Կայնավորների ջոկատի պետը գուգազի պետի ոգնականն է հանդիսանում, որին նա փոխարինում է բացակայելու ժամանակ:

15. Հավաքում է (նախորոք մշակված ծրագրով) բառ հնարավորության լրիվ տեղեկություններ հրդեհների, նրանց ծագման պատճառների մասին ու անմիջապես ներկայացնում գուգազի պետին:

16. Հսկում է իր ջոկատի ունեցած գործիքների սարք ու կարգին լինելու վրա:

17. Զբաղվում է իր ջոկատի ուսուցմամբ:

18. Ղեկավարում է իր ջոկատի աշխատանքը հրդեհների և ուսումնական վարժությունների ժամանակ, կազմում է ջոկատի ցուցակներ, իր ջոկատի զանցառու անդամներին առաջադրում է տույժի յենթարկելու, իսկ աչքի ընկնողներին՝ պարգևատրելու համար:

9. Իր բացակայության կամ գուգազի պետին փոխարինելու դեպքում, նշանակում է տեղակալ իր ջոկատի անդամներից, հայտնելով այդ մասին խորհտնտեսության կամ մեքենատրակտորային կայանի վարիչին:

## ՓՈՂԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՋՈԿԱ-ՏԻ ՊԵՏԸ.

20. *Փողավորների և ջրամատակարարների ջոկատի պետի վրա դրվում են այս հրահանգի* 16, 17, 18 *հոդ. նշված պարտականությունները:*

*ԽՍՀՄ Հրդեհային Պահպանության ՊԵՏ*
*ԽՍՀՄ Կենտգործկոմին կից Կ. Տ. Հ. Խ. Անդամ՝*
ԿԻՍԻԼՅՈՎ

---

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ.-ԴԱՐԱՆ
Гос библиотека
ЗУОП-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0276728

13 972

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР